ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 52
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
30-ը ապրիլի 2021թ.

Նիստը տեղի է ունեցել առցանց՝ zoom հարթակում: Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա.Հ.Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ.Ս.Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա.Հ.Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգը հաստատելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Ց. Դավթյան)**
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը հաստատելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲՎԴ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան)**
3. ԵՊՀ ԻՄ ուսումնական պլանների կազման ընթացքի մասին: (Առկա բակալավր՝ 2021-2025, հեռակա բակալավր՝ 2021-2026, հեռակա մագիստրատուրա՝ 2021-2023)
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Ց. Դավթյան)**
4. Ընթացիկ հարցեր
   4.1. ԵՊՀ ԻՄ էթիկայի հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Հ.Մակարյան)**

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**

Որոշում՝

- Հաստատել նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u> `«««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Ց. Դավթյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ Մասնաճյուղում անցած տարի նույնպես կատարվել է նույն կրթական ծրագրով ընդունելություն, և այդ կարգում էական փոփոխություններ չեն կատարվել: Նա նշեց, որ սույն կարգը կազմելիս առաջնորդվել ենք ԵՊՀ-ի համապատասխան կարգով տարբեր են փաստաթղթերի ներկայացման և ընդունելության կազմակերպման ժամկետները: ԵՊՀ-ում փաստաթղթերի ընդունելությունը իրականացնելու է առցանց, և մենք նույնպես նման ձևով ենք ամրագրել: Ընդունելության ժամկետները սեպտեմբերի մեկից մինչև հոկտեմբերի մեկը փոխվել են սեպտեմբերի ութից մինչև հոկտեմբերի ութը: Ուրիշ փոփոխություններ կարգում չեն կատարվել:

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մ. Միքայելյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբորնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Գ.Սիմոնյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Գ. Հովհաննիսյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը և այլոք:

Մասնավորապես **Ա. Մակարյանը** նշեց, որ ներկայացված կարգում ԵՊՀ համապատասխան կարգից էական շեղումներ չկան: Կրթական ծրագրում նույնպես կատարվել է փոփոխություն՝ հնարավորինս ընդլայնել են պոտենցիալ դիմորդների շրջանակը: Սակայն ի տարբերություն անցած տարվա, այս տարի առավել անհրաժեշտ է հնարավորինս կենտրոնանալ հստակ մասնգիտություններով ընդունելության վրա, և դպրոցում «չեղած» մասնագիտություններով ընդունելություն չենք կազմակերպի, լրացուցիչ խնդիրներից խուսափելու համար: Նա նշեց, որ աշխատող և փորձված կարգ է և այս տարի նույնպես կգործի: Գ.Սիմոնյանը առաջարկեց 4-րդ կետում «տնօրենի ղեկավարությամբ» արտահայտությունը դարձնել «տնօրենի նախագահությամբ», ինչպես նաև առաջարկվեց 7.5 կետերում «12.3»-ի փոխարեն գրել «7.3»

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 52/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգը՝ համաձայն հավելված 1-ի։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Օրակարգի երկրորդ</u> ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը հաստատելու մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի վարիչ **Ն. Գրիգորյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ սույն կարգով կանոնակարգվելու է ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները։ Կարգը մշակվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունների, ԵՊՀ ԻՄ 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի, Կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ քաղաքականության, ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգի (27.06.2019, ԵՊՀ ԳԽ) հիման վրա: ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները որակի ներքին ապահովման գործընթացներ են և կրթական ծրագրերի իրականացման փուլում՝ դրանց որակի ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներից։ Կարգը սահմանում է ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացների նպատակները և խնդիրները, դրանց ներկայացվող հիմնական պահանջները, կիրառվող ընթացակարգերը, հիմնական դերակատարներին և համապատասխան ժամանակացույցերը: Նշվեց նաև, որ սույն կարգը մշակվել է ՄԿՈԱ բաժնի հետ համագործակցությամբ։

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մ. Միքայելյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբորնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Գ. Սիմոնյանը, Տուրիզմի և մշակութաբանության

ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Գ. Հովհաննիսյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը և այլոք։ Արտահայտվողները կարևորեցին կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման գործընթացների կանոնակարգման դերը կարթական ծրագրերի բարելավման գործում։

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 52/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը համաձայն հավելված 2-ի։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Օրակարգի երրորդ</u> **՝** «ԵՊՀ ԻՄ ուսումնական պլանների կազման ընթացքի մասին։ (Առկա բակալավր՝ 2021-2025, հեռակա բակալավր՝ 2021-2026, հեռակա մագիստրատուրա՝ 2021-2023))» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Ց. Դավթյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ ուսումնական պլանների կազմումը ընթացել է ըստ գործող ժամանակացույցի, ամբիոնների և կրթական ծրագրերի ղեկավարների համատեղ աշխատանքով, որոնք առաջնորդվել են ԵՊՀ ԻՄ-ում գործող համապատասխան կարգերով և այլ իրավական ակտերով։ Կատարվել են որոշ փոփոխություններ, որոնք հիմանավորված ներկայացվել են համապատասխան ամբիոնների նիստերի արձանագրություններում, ինչպես նաև ներկայացվել են ՈՒՄՎ։ Փոփոխությունները հիմնականում կատարվել են առարկայական մոդուլների, կրեդիտների, ժամաքանակի և գնահատման ձևերի հետ կապված։

Նշվեց, որ Մասնաճյուղում կազմվել է առկա ուսուցման 12 կրթական ծրագրերով ուսումնական պլաններ, փոփոխություններն իրականացվել են «Հոգեբանություն», «Պատմություն», «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերով, մնացած գործող կրթական ծրագրերում որևէ էական փոփոխություն չի եղել։ Հեռակա ուսուցման ձևի համար կազմվել են 6 կրթական ծրագրի ուսումնական պլաններ և մագիստրատուրայի 1 կրթական ծրագրի ուսումնական պլան՝ որտեղ փոփոխություն է եղել միայն

կամընտրական դասընթացին վերաբերվող առարկաներում, մասնավորապես դասավանդման մեթոդիկա առարկաների ցանկում:

Կարող ենք ասել, որ այս պահի դրությամբ մեր ուսումնական պլանները ամբողջովին պատրաստ են և կարող ենք անցնել գործընթացով նախատեսված հաջորդ փուլերին:

Արտահայտվեց – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանը**:

Ա.Մակարյանը նշեց, որ անհրաժեշտ է, որպեսզի դեկանները ուշադրություն դարձնեն ուսումնական պլաններում կատարված փոփոխություններին, և հետևեն, որպեսզի համապատասխան կրթական ծրագրերում իրականացվելիք տրամաբանական փոփոխությունները կատարվեն ճիշտ և ժամանակին:

Որոշեցին.

Որոշում

ՈՒՄՎ պետ **Ա. Ց. Դավթյանի** հաղորդումը ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ ԵՊՀ ԻՄ էթիկայի հանձնաժողովի կազմը հաստատելու մասին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Հ. Մակարյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ հարցը տեղափոխվել է նախօրդ նիստի օրակարգից՝ թեկնածուներ չլինելու պատճառով, այժմ ֆակուլտետները և ուսանողական կառույցները ներկայացրել են մեկական ներկայացուցիչներ էթիկայի հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար.

1 **Պավել Նորիկաի Ասիլբեկյան**՝ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ (Տնտեսագիտության ֆակուլտետի ներկայացուցիչ)
2 **Աիդա Ասիլբեկի Սարհատյան**՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ (Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ներկայացուցիչ)
3 **Լևոն Երվանդի Լաչիկյան**՝ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ (Կիրառական արվեստի ֆակուլտետի ներկայացուցիչ)
4 **Ալեքսան Շամիլի Մարգարյան**՝ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ (Բնական գիտությունների ֆակուլտետի ներկայացուցիչ)
5 **Ինգա Գառնիկի Ասլանյան**՝ Անգլերեն լեզու և գրականություն կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի (ՈՒԳԸ ներկայացուցիչ)

6 **Կարինե Անդրանիկի Մուքաելյան** Անգլերեն լեզու և գրականություն կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի (ՈՒԽ ներկայացուցիչ)

Բաց քվեարկությամբ՝ 21 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 52/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 16-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի էթիկայի հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 3-ի։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ